



Տեսանկիւն

Դէպի Իսթանպուլ Թռիչքներն ու Ինքնանպատակ Ընդդիմութիւնը

Վերջերս մեծ աղմուկով ընթացք առին FlyOne Armenia կոչուող օդանաւային ընկերութեան երեւան – Իսթանպուլ ուղիով (չարթըր) չուերթները: Անկախ մեր սկզբունքային հակաթուրք կեցուածքէն ու վերապահութիւններէն, այն ինչ կը վերաբերի, Թուրքիոյ արտադրութիւններուն եւ զբօսաշրջութեան քաջալերանքին, վերոյիշեալ չուերթներուն դէմ ընթացք առած քարոզչութիւնը ու զայն հակակշռել փորձող յայտարարութիւնները երեւոյթ սկսան դառնալ:



Ընդդիմութիւնը իր հակակշիռին տակ եղող ամբողջ մամուլը ի գործ դրած է վարկաբեկելու վերոյիշեալ ընկերութիւնն ու անոր չուերթները դէպի Իսթանպուլ: Ընդդիմութեան հովանիին կամ ազդեցութեան տակ գործող ընկերային համացանցի իրական, թէ կեղծ օգտատէրերը զօրաշարժի ենթարկուած են անդադար հարուածելու դէպի Իսթանպուլ թռիչքներ իրականացնող օդանաւային ընկերութիւնը: Ի տես այս հակաքարոզչութեան, նշեալ ընկերութիւնն ու անոր սեփականատիրոջ հովանաւորող Զայաստանի ներկայ իշխանութիւնները իրենց ենթակայ մամուլով եւ մասամբ Նորին, ամէն ինչ կ'ընեն արդարացնելու համար տուեալ ընկերութեան, նշեալ քայլը: Սոյն իրավիճակին վրայ եկաւ աւելնալու Նաեւ Fly One-ի դէպի Իսթանպուլ առաջին չուերթին չափազանցուած ընդունելութիւնը՝ Պոլսոյ մէջ տեղւոյն համայնքի ներկայացուցիչներուն կողմէ...:

Վերոյիշեալ վիճակին մէջ մեզի ապշեցնող երեւոյթը այն է, որ երեւան-Իսթանպուլ չարթըր թռիչքներ 1990-ականներէն ի վեր մինչեւ 2019 անաղմուկ տեղի ունեցած են եւ դադարած են, ոչ թէ ազգային զգացումներով ու նպատակներով կամ թրջական կողմի թշնամութեամբ, այլ՝ պարզապէս զայն իրականացնող օդանաւային ընկերութեան, սեփականատէր մայր հաստատութեան՝ Արլաս կողմի սնանկացումով...:

Զիմնուելով այս քիչ մը երկարած ներածականին վրայ, մեզի կը մնայ շեշտել, որ ընդդիմութեան գրոհը աւելի կը նպաստէ տուեալ ընկերութեան գովազդին քան հակաթուրք սկզբունքի արտացոլացումին: Սխալ ռազմավարութեամբ գրոհ մը, որ եթէ գումարենք անոր հանդէպ հակադարձութեան, ու հայկական մամուլի հարթակներուն վրայ երկուքին միատեղ զբաղեցուցած տեղին վրայ, ապա կ'ունենանք FlyOne Armenia-ի յօգուտ լաւագոյն գովազդը, զորս ընելու համար հսկայական պիւտճէ մը տրամադրած պէտք է ըլլար նշեալ ընկերութեան տնօրէնութիւնը: Կը մնայ այստեղ հարցնել «գոյութեանական» հարցում մը. Այս վիճակը ստեղծողները տարրական ողջմտութիւնը ունի՞ն: Առեւտրական գիտութիւններուն մեծ իմացականութեան ալ պէտք չկայ այս բանը հասկնալու համար: Ի դէպ, տեղին է այստեղ տեղեկացնել, որ FlyOne Armenia-ի յաջորդ չուերթին տոմսերը երէկուայ դրութեամբ արդէն սպառած էին...:

Կը մնայ յիշեցնել, որ ընդդիմութեան սխալ ռազմավարութիւնն ու հակաիշխանական պայքարի ապիկար տնօրինումը՝ ատենի

Լիբանանեան Լուրեր

Ընտրութիւնները Իրենց Ժամանակին Տեղի Պիտի Ունենան... Խուսափելու Տեղ Չկայ. ԱՄՆ Դեսպան


Լիբանանի մէջ ԱՄՆ դեսպան Տորոթի Շէա յայտարարեց, որ «Լիբանանի յաջորդ խորհրդարանական ընտրութիւնները պէտք է տեղի ունենան իրենց ժամանակին»: Այս յայտարարութիւնը կու գայ համատարած այն մտահոգութիւններու ֆոնին, որ որոշ կուսակցութիւններ կրնան ձգտիլ յետաձգել յառաջիկայ Մայիսին նկատի առնուած ընտրութիւնները:



«Միջազգային ընտանիքը ամբողջութեամբ համաձայն է, որ ընտրութիւնները կայանան իրենց ժամանակին, արդար և թափանցիկ եղանակով»: «Խուսափելու տեղ չկայ» եզրափակած է դեսպանը:

Հայկական Լուրեր

Արցախի Մէջ Հայկական Մշակութային Ժառանգութիւնը Փրկելու Համար ՀԿ-ները ՀՀ Կառավարութեան Կոչ Կ'ընեն ՄԱԿ Դիմելու



մասնաւորապէս՝ ՀՀ ԱԳ նախարարութեան, ԿԳՄՍ նախարարութեան:

Հայաստանի Հանրապետութեան շարք մը հասարակական կազմակերպութիւններ յայտարարութիւն տարածած են Արցախի մէջ հայկական մշակութային ժառանգութեան ոչնչացման վերաբերեալ: ՀԿ-ները պահանջներ ներկայացուցած են ՀՀ վարչապետին եւ կառավարութեան,

17 կուսակցութիւններու համախմբումէն, մինչեւ այսպէս կոչուած Հայրենիքի փրկութեան ճակատ կամ ԱԺ վերջին ընտրութիւններու նախօրէին մեծամիտ շոյերն ու հանրահաւաքները, աւելի վնաս հասցուցին ընդդիմութեան, քան իշխանութեան: Այսօր ալ խորհրդարանային ընդդիմութիւնը իր ապիկար, ինքնագոհ, ինքնանպատակ եւ ինքնակեդրոն գործունեութեամբ ականմայ (գուցէ եւ կամայ) կը սատարէ պատմական թիրիմացութիւն հանդիսացող այսօրուայ ապազգային իշխանութեան տակաւին գոյատեւումին:

Ի տես շոյերով միայն կէտեր արձանագրել փորձող ընդդիմութեան գործելաձեւին՝ անցեալ Յունիսի ընտրապայքարի ոճէն մինչեւ վերջերս կայացած՝ ինչ որ ամեակի տօնակատարութիւն, մեզի կը մնայ ցաւօք ըսել, որ այս իշխանութիւնը հալալ է այս ընդդիմութեան, մինչ վարչապետի աթոռը զբաղեցնող անձը (ցնոր աշխարհաքաղաքական անակնկալ պարտադրանք մը) «յաւերժ» կը թուի ըլլալ:

Աւարտին կը մնայ բարձրաձայն կոչել. «Ո՛վ Հայ Ժողովուրդ ներ՝ խորհրդարանային այս ընդդիմութեան, քանզի ան չի գիտեր ի՞նչ կ'ընէ»: Արդե՞օք գիտէ:

ՍԵՒԱԿ ՅԱԿՈԲԵԱՆ



ՌԱԿ-ի Համադրուած Մամուլ

Կամք Ունենք, Ուզում Ենք Ապաքինուել. Դաւիթ Բաբայեան Կայացաւ «Արցախի Ներկան Եւ Ապագայի Տեսլականը» Խորագրով ՌԱԿ-ի Մամուլի Առջանց 18-րդ Լսարանը

ՔՐԻՍԹԻՆԱ ԱՂԱԼԱՐԵԱՆ

«ԶԱՐԹՈՆԵՐ»-ի Երեւանի Աշխատակից

«Զարթոնք», «Արեւ» եւ «Սարտարապատ թերթերը վերսկսում են «Այժմեական Հարցերու Բազմաձայն Քննարկումներ» ընդհանուր թեմայով՝ Մամուլի առջանց լսարանների շարքը, այս անգամ աւելի եւս ընդլայնուած հովանիով՝ «ՌԱԿ Համադրուած Մամուլ» անուան տակ (Ռամկավար Ազատական Կուսակցութեան աշխարհասփիւռ 8 մամուլի օրկաններով):




«Արցախի Ներկան Եւ Ապագայի Տեսլականը» խորագրով 18-րդ Առջանց լսարանի հիւրը Արցախի արտգործնախարար Դաւիթ Բաբայեանն էր: Արցախի արտգործնախարարը խօսեց յետպատերազմական Արցախի վիճակի մասին, հայկական երկրորդ հանրապետութեան ապագայի եւ անելիքների մասին:

Առջանց լսարանը վարեց Լիբանանի «Զարթոնք» օրաթերթի գլխավոր խմբագիր Սեւակ Յակոբեանը, ով իր խօսքի սկզբում 44-օրեայ պատերազմի օրերից դրուագ մը յիշատակեց, երբ Պրն. Դաւիթ Բաբայեանին հետ միասին եղել են Ստեփանակերտի զինուորական լրատուական շտաբի ապաստանարանում երբ դուրսը ռումբերու տարափ էր: Յակոբեան ըսաւ, որ այդ օր Աստուած մեզի պահեց, սակայն շատ լոյս երիտասարդներ զոհուեցին, պատերազմը պարտութեամբ աւարտուեց, Արցախը անդամահատուեց, սակայն վերապրեց իր ժողովուրդին կամքով: Ան այս մեջբերումով Արցախի պատերազմական դառն օրերի անցելը կապեց անոր ներկայի եւ ապագայի տեսլականին հետ: Յակոբեան ապա երախտագիտութիւն յայտնեց բանախօսին եւ հիւրերին մասնակցութեան համար:

Դաւիթ Բաբայեանը, խօսելով Արցախի այսօրուայ վիճակի մասին, նշեց՝ Արցախում այսօր բարդ իրավիճակ է, բայց, կարծես, ապաքինման գործընթացն ընթանում է, ուստի անելիքները շատ են: «Դուք տեսնում էք ինչպիսի խոցուած ու ծանր վիրաւորուած վիճակում է: Ես Արցախը համեմատում եմ վիրաւոր մարտիկի հետ, ով կորցրել է ձեռքը, ոտքը, աչքը, բայց կենդանի է: Սա արդեն իսկ նշանակում է, որ կամք ունենք, ուզում ենք ապաքինուել», - ասաց բանախօսը:

Արցախցի պաշտօնեան մէկ կարեւոր հանգամանքի վրայ ներկաների ուշադրութիւնը հրաւիրեց, որ այսօրուայ իրավիճակում շատ կարեւոր է լինել հայամետ, շատ կարեւոր է ճիշտ քաղաքականութիւն վարել, քանի որ Արցախը շրջապատուած է թշնամիներով:

Նրա խօսքով՝ Ազրայեճանը չի հրաժարուում իր քաղաքականութիւնից, փորձում է հոգեբանօրէն ճնշել արցախցիներին, ֆիզիքապէս չի կարող յարձակուել, քանի որ Արցախի ամբողջ տարածքով ռուս խաղաղապահներ են տեղակայուած եւ յարձակումը Արցախի վրայ, կը նշանակի յարձակում Ռուսաստանի վրայ: «Միայնակ Արցախը արդեն իսկ ի վիճակի չէ պաշտպանուել, բայց դա չի նշանակում, որ անվտանգութիւն չենք կարող պահպանել: Անվտանգութիւնը միայն ռազմական չի լինում, պետք է ճիշտ արտաքին քաղաքականութիւն վարել: Ո՛չ Հայաստանը ո՛չ Արցախը միայնակ ի վիճակի չեն ռազմական առումով պաշտպանուել: Կողքը Թուրքիան է,



Դաւիթ Բաբայեան



Մասնակիցներէն տեսարան մը

որն ունի 86 մլն բնակչութիւն, 700 հազար կանոնաւոր բանակ: Այս ահռելի ուժի կողքին մենք հաւասարակշռութիւնը կարող ենք պահել միայն ճիշտ արտաքին քաղաքականութիւն վարելով: Անգամ այս վիրաւոր վիճակում, Արցախը մեծ դեր ունի աշխարհաքաղաքական իրողութիւններում, որովհետեւ եթէ չլինի Արցախը, ամբողջ Անդրկովկասը կարող է անցնել Թուրքիայի տիրապետութեան տակ», - ընդգծեց Դաւիթ Բաբայեանը:

Այս համատեքստում, օրինակ բերելով Ղազախստանի վերջին դէպքերը, Բաբայեանն ասաց՝ այնտեղ փանթուրքիստական ծրագիրը ձախողուեց. «Հայ ժողովուրդը խելացի է, բայց ունի խնդիրներ համախմբուածութեան հետ կապուած»:

Խօսելով Արցախի յետպատերազմական վիճակի մասին, արտգործնախարարը ներկայացրեց, որ այսօր մեծ թափով շինարարական աշխատանքներ են ընթանում, սոցիալ-տնտեսական կարեւորագոյն նախագծեր են իրականացուած, կեանքը կարծես ընթանում է բնականոն հունով: «Իսկապէս, ես չեմ ուզում չափազանցութիւն լինի, բայց ամեն ինչ կախուած է մեզանից: Եթէ մենք ունենանք արժանապատուութիւն, հաւատք, սեր մէկը միւսի նկատմամբ, մենք կը կարողանանք պահպանել այն, ինչ մնացել է: Բայց եթէ մենք հայրենասիրութիւն չունենանք, գերադասենք անձնական շահը պետականից, միանշանակ կործանուելու ենք: Մէկ մարդուց շատ բան է կախուած, հաւատացե՛ք», - վստահաբար նշեց Դաւիթ Բաբայեանը:

Նրա համոզմամբ՝ Հայաստանի ու Արցախի կայունութեան համար մեծ դեր ունի համայն հայութիւնը: Դաւիթ Բաբայեանի ներածական խօսքից յետոյ հանդիպման մասնակիցները տարբեր՝ իրենց յուզող հարցեր ուղղեցին արտգործնախարարին:

Ներկաներից Գեորգ Մարաշլեանը հետաքրքրուեց, եթէ արցախցիները ամբողջութեամբ ռուսական քաղաքացիութիւն ստանան, Արցախը կը շարունակի՞ գտնուել Ազրայեճանի կազմում յայտնուելու վտանգի առջեւ:

«Այստեղ խնդիրը ՌԴ քաղաքացիութիւն ստանալը չէ: ՌԴ քաղաքացիութիւն ստանալն այսօր շատ աւելի հեշտ է: Ռուսաստանը ազատականացրել է քաղաքացիութիւն ստանալու կարգը: Խնդիրն այն է, որ մեզ համար կարմիր գիծ է Ազրայեճանի կազմում լինելը, մենք չենք կարող լինել Ազրայեճանի կազմում: Դա հնարաւոր չէ: Մենք իրենցից պրծել են, այն էլ խորհրդային տարիներին: Այն ժամանակ Ազրայեճանը անկախ չէր, կար խորհրդային միութիւն, որը ճնշում էր ցանկացած ազգայնական շարժումներ: Հիմա Ազրայեճանը անկախ երկիր է, որտեղ հայատեացութիւնը պետական գաղափարախօսութիւն է: Մենք պետք է առանց զգայնականութեան հասկանանք՝ ի՞նչ է Ազրայեճանը: Ազրայեճանը բազմազգ պետութիւն է, որը վերջնականապէս ձեւաւորուած չէ: Այդ երկրում կան բազմաթիւ Էթնիկ խնդիրներ: Եւ այս պարագայում դարաբաղեան հակամարտութիւնը կամաւոր լուծում չունի: Կամ ռազմական պետք է լինի, իրար ոչնչացնելով, կամ սառնեցնելով:

Ռազմիկ Դաւոյեանի «Ռեքվիեմ»ը

ՍԱՐԳԻՍ ՎԱՅԱԳՆ

Ռազմիկ Դաւոյեանի մուտքը մեր քերթողական անդաստանէն ներս եղաւ անաղմուկ. Վտիտ քերթողատետր մը՝ «Իմ Աշխարհը», Պարոյր Սեւակի խմբագրութեամբ: Յետոյ, «Ստուերների Միջով»ը՝ դարձեալ վտիտ ու անշուք կազմով: Բայց այսքանն ալ բաւական եղաւ որ նոր շունչով, նոր նայուածքով եւ նոր տեսլականով օժտուած բանաստեղծը պարտադրե ինքզինք եւ գրաւէ իր արժանի տեղը հայրենի բանաստեղծներու աւագ-նորերու հոյի կողքին: Ճիշդ է, հոյին ամենակրտսերն էր, բայց արդէն կը զանազանուէր հոյլէն: Նոր հոյի մը նախակորիզը կը դառնար, որպէս խուզարկուն նոր հորիզոններու: Փայլուն խոստում մըն էր: Եւ սպասցնել չտուաւ այդ խոստումը: Ահաւասիկ հասունութեան իր փաստը՝ «Ռեքվիեմ» իր երկարաշունչ պոեմը:



Առաջին հեղ ծաղկաքաղի մը տպաւորութիւնը կը թողու «Ռեքվիեմ»ը, մեր դարաւոր քերթողութեան ոսկեայ ծաղկաքաղին: Հոն արձագանգներ կան վահագնաշունչ մեր հեթանոսութենէն, կայ ճենճերումը Նարեկացիին, տրտունջը Դուրեանին, գեղուղէ հասակը Վարուժանին, ցասումը Սիւսանային, կայ տակաւին եւ մանաւանդ թախիծը Տերեանին, նայիրեան մորմոքը Չարենցին եւ նոր օրերու հպարտութիւնը Պարոյր Սեւակին: Բայց բնա՛ւ հաւաքածոյ մը չէ այդ ծաղկաքաղը, այլ պարզապէս իւրացումը, զտումը, բիւրեղացումը անոնց ազնուագոյնին եւ լուսաւորումը անոնց՝ իր նոր ու սեփական լոյսի ճանաչումով:

Ռազմիկ Դաւոյեան, այսպէ՛ս, արմատները խրած հայ բանաստեղծութեան պարարտ հողի ընդերքներուն, լիացած, հարստացած անոր ոսկի աւանդով, ճամբայ ելած է սակայն իբրեւ նոր ուղիներու խուզարկու, նոր տագնապներու, մտահոգութիւններու եւ զգայնութիւններու սուզակ, նոր դարու մարդն է ան: Նոր խօսք ունի ըսելիք: Հին մտածելաձեւերուն եւ արտայայտչականութեան մէջ նեղուածք կը զգայ: Կը ջանայ չկաղապարուիլ շրջանային նեղ ու ժլատ մտածողութեան մէջ: Այլ որպէս արդի մարդ, իր արմատները կը փնտռէ շատ հեռուն, նախնադարեան քարայրներէն իսկ անդին, եւ իր յիշողութիւնները կու գան տիեզերքի ձեւաւորման օրերէն, երբ՝ «չեմ յիշում ո՛վ, աստղերը անգոյն, փոքրիկ, մեծ-մեծ, սեղմեց իրար, զարկեց իրարու...», «երբ դու փղոսկրէ անօթ էիր՝ լցուած դատարկութեամբ, ես ծուխ էի՝ լուծուած փղոսկրով...», «երբ ժամանակը արեւագալի ձեռքերով ոսկէ, բացեց կապտամուր գիշերուայ առաջ մեր աչքերը փակ:»

Ա՛լ իր տարերքը մարդն է, քարանձաւի դարերէն մինչեւ տիեզերական թռիչքներուն հասնող մարդը, մարդը եւ անոր բախտը, մարդը եւ անոր ճամբան, մարդն ու մահը, մարդն ու երջանկութեան որոնումը, մարդն ու իր ստրկացումը, ինչպէս նաեւ անոր մաքառումները, թախիծը, առանձնութիւնն ու ազատութեան տենչը: «Ռեքվիեմ»ը պարզապէս մարդեղութեան պոեմն է, անոր բոլոր յոյգերուն, բոլոր երազներուն եւ թռիչքներուն, նաեւ՝ բոլոր անկումներուն եւ եղանակներուն հերարձակ երգը վսեմ: Կամ բանաձեւումով՝ պատկերազարդ պատմութիւնը անցեալին, եռքն ու բաբախումը ներկայի սրտին եւ լուսատենչ թռիչքը դէպի գալիք օրերը պայծառ: Բարեբախտաբար, ընդհանրական մարդը բանաստեղծին նայուածքէն չէ պահած, չէ ծածկած մարդու առանձնայատուկ այն տեսակը որ հայ մարդ կը կոչուի: Դաւոյեանին համար մարդկութեան արիւնտ ճանապարհին վրայ, առանձնայատուկ հանգրուան մըն է հայ մարդուն խաչելութիւնն ու յարութիւնը: Ան երգած է Հայ Գողգոթան որպէս մարդկային մեծագոյն աղետներէն ամենէն եպերելին: Երգած է «եղեռնի օրեր» անապատի աւազներուն վրայ լլկուած» որպէս նախատինք, «մեր բախտի բոլոր անդունդները», ինչպէս նաեւ մեր յարութեան «յոյսն ու հաւատքը:»

Իր ընդհանրութեան մէջ այս է նոր խօսքը Դաւոյեանին, հոգեհանգի՛ստ մարդկութեան երկար ճանապարհին ինկած նահատակներուն եւ հաւա՛տք նաեւ՝ մարդուն բարութեան եւ վերընծիւղումին հանդէպ: Բայց ինչպէս ամէն ընդհանրացում, այս մէկն ալ կը մնայ տժգոյն եւ մասամբ անգոր՝ Դաւոյեանի գրքին գահավիժող զգացականութեան, խառնաող խոհերուն եւ մորկաշունչ թաւալքին դէմ յանդիման: Եւ այս բոլորը մատուցուած՝ ցնցող կամ քնքոյշ բայց անապայման կլանիչ պատկերներով, երեւակայութեան հզօր թափով, հրաշէկ կիրքով, խանձող մորմոքով, ինչպէս նաեւ զգլացող մեղմութեամբ, հետացող բայց խօսուն լռութեամբ եւ ամբողջութեամբ՝ շունչը բռնող գեղեցկութեամբ: Գեղեցկութիւն ժայթքեցնելու մոգականութիւն ունի Դաւոյեան: Գեղեցկութիւն շաղ տալու, ամէն մէկ քայլափոխիդ քեզ անոնցմով ողողելու հմայիչ

կարողութիւնը ունի ան: Լսենք զինք.

«Տուէք ինձ իմ ձեռքերը,

Եւ ձեզ համար գոյն-գոյն լոյսեր կը քաղեմ ես,

Կը հաւաքեմ ծաղիկների շուկները մէկ-մէկ...»:

Գեղեցկութիւնը գլխաւորաբար իր նայուածքին մէջ է, որ գիտէ սեւեռուիլ ամենահասարակ իրի, տարրի կամ երեւոյթի վրայ եւ անոր սովորական վարչամակին տակէն դուրս հանել ընտրանի գեղեցկութիւնը: Ահա՛ նմոյշ մը եւս.

«Տա՛յ է

Անասելի, անծա՛յր մի տապ,

Հեռու քառանձաւից

Խեղդող օրուայ խոխոռոցն է գալիս...»

Սա սովորական խոռոչայ բարերու շարայարում մըն է: Բառերը առանձին-առանձին առած՝ ո՛չ բանաստեղծական են եւ ոչ ալ թելադրական, բայց բանաստեղծին գրչին տակ մէկտեղուելով, շարահիւսուելով կը ստեղծեն պահի մը ֆիզիքական զգացողութեան այնպիսի թելադրականութիւն մը, որուն ազդեցութեան տակ ոչ միայն բուռն թափով կ'ապրինք պահը, այլ եւ մանաւանդ թափ կու տանք մեր երեւակայութեան, երթալ հասնելու համար մինչեւ նախամարդուն քարանձաւները: Իսկ երբ ան կ'ըսէ.

«Մեր բերանը – ճեղքուած ու վիրաւոր մի սիրտ՝

Ատամների վայրագութեամբ բռնաբարուած,»

Մեր սովորական, այնքան պիտանի ակռայ-ատամներուն կը վիճակուի վայրագութեամբ բռնաբարողի այսպիսի սոսկալի դեր մը, որ ֆիզիքական իրականութենէն անդին կը մատնէ դասակարգ մը մարդոց գիշատիչ ախորժակները այնքան դիպուկ ձեւով:

Այսպիսով Դաւոյեան կը դառնայ բառերու, պատկերներու ալշիմիստ մը: Ան չի վարանիր բառերու օրինաւոր շարահիւսութիւնն իսկ խառնշտկել եւ անոնց իմաստն ու պաշտօնը շրջել, բռնելու համար ճիշդ այն պատկերը, որմէ լաւագոյն հանդերձանքով պիտի ցայտէ միտումն ու մտածումը:

Այսպէս՝

«Աղաղակով թռչող լճեր կային՝

Մեռած կարապետների վրայ»

Կ'ըսէ բանաստեղծը պատկերելու համար անմեղութեան, յոյսին խողխողումին ողբերգութիւնը, կարապին յատկանիշները լճին փոխանցելով:

Պատկերաւոր մտածողութիւնը Դաւոյեանի նախընտրած ձեւն է: Պատկերներու կը հանդիպինք գրեթէ ամէն անկիւնադարձի, իւրաքանչիւր տողի մէջ, պատկերներ որոնք կը խաճեն, կը մտրակեն մեր երեւակայութիւնը անոր ընձեռնելով ուժականութիւն մը որ կը գերազանցէ իրականութիւնը: Տակաւին, անոնք կրնան նրբօրէն շոյել մեր զգացումները, նոր գեղեցկութիւններ կը հիւսեն ներաշխարհիդ մէջ, միշտ յայտնուելով չապաստուած անկիւնէն, անակնկալի բերելով քեզ, արթուն ու զգաստ պահելով ուշադրութիւնը: Եւ բնաւ չեն յոգնեցնէր այդ պատկերները, որովհետեւ թարմ են, ճկուն, ճշգրիտ եւ վայելչագեղ անապայման, եւ ունին իրենց անհրաժեշտ դերն ու պաշտօնը, այսպէ՛ս՝

«Առուններում լոյսը կարկաչում է ահա,

Քարերը ծաղկում են,

Գոյն-գոյն ծիծաղները

Թռչկոտում են ծաղկած քարերի մէջ:»

Դեռ կարելի է բերել բուռ-բուռ այլ պատկերներ ալ, «ծովէն հանուած» մարգարիտի պէս մաքուր, բիւրեղ ու վճիտ: Ատոր համար հարկ պիտի ըլլայ մէջբերել ամբողջ գիրքը:

Դաւոյեանի լեզուն հարուստ է եւ ճկուն միանգամայն: Գրաբարէն աճած է յորձք եւ վեհութիւն, արեւմտահայերէնէն՝ զգացական նրբութիւն եւ գունագեղութիւն իսկ արեւելահայերէնը պարզեւած է իրեն հիւթեղ պարզութիւն եւ քնարականութիւն: Երեքին համադրութեամբ ստեղծած է բազմերանգ, նրբագեղ լեզու մը որ ըստ պահանջի յորձանուտ է, կամ մեղմ ու հանդարտ, մերթ շաջող ու խառնաող, մերթ ալ վեհ ու միսթիք: Ամէն հոգեվիճակի հարազատութիւն, ամէն մտածումի պայծառութիւն եւ զգացումի խռովք պարզեւող լեզու:

Երբ իր աւարտին կը փակենք գիրքը եւ կը փորձենք կշիռի զարնել գայն, կ'ունենանք վարանման պահ մը, ո՞ր ծանրութեան չափով կշռել գայն, ինչպիսի չափանիշով արժեւորել կամ ի՞նչ տարագի տակ բերել «Ռեքվիեմ»ը: Բոլոր մեր ունեցած չափանիշները, այս պարագային, անյարմար կը թուին, ժամանցուած: Որովհետեւ Դաւոյեան, հակառակ իր հին ու խոր արմատներուն, նոր է ամբողջութեամբ: Նոր՝ համամարդկային իր հորիզոնով, նոր՝ տիեզերականին իր ձգտումով եւ շունչով, նոր՝ մտածելակերպով, զգայնութեամբ, նայուածքով, արտայայտչականութեամբ եւ մանաւանդ ներշնչումով: Ինքնին, ինք արդէն նոր չափանիշ մըն է մեր նոր բանաստեղծութեան նոր չափանիշը:

ԹՄՄ-ի Լուրեր

Հայաստան

Մալխասի Կատարում ու Անկատար Երազանքները

Հայ Ճազմեն, Հայաստանի Ժողովրդական Արտիստ, Հայաստանի Վաստակաւոր Գործիչ, «Մովսէս Խորենացի», ՌԴ Լոմոնոսովի Անուան, ՀՀ Մշակույթի Նախարարութեան Ոսկէ Մեդալակիր Լեւոն Մալխասեան

Ճազմէն Լեւոն Մալխասեանը՝ Մալխասը, ծանաչուած ու սիրելի է ոչ միայն հայրենիքում, այլեւ նրա սահմաններից դուրս: Այլ կերպ ասած՝ Մալխասը եւ նրա անունը կրող ակումբը ճազի երեւանեան այցեքարտն են:

«15 տարեկան էի, երբ մեր տանը ռատիոալիքներից մեկով լսեցի աստղածային երաժշտութիւն: Չէի հասկանում, թէ դա ինչ է, բայց ամէն օր, երեկոյեան նոյն ժամին սպասում էի «Time for jazz» հաղորդմանը, որը վարում էր ճազային մեկնաբան Ուիլիս Կանովերը: Այդպէս ծանօթացայ ճազի հետ»,- տարիների հեռուից յիշում է Մալխասն ու յաւելում՝ այդ օրից սկսած, երկու տարի շարունակ, ռատիոյից ձայնագրում էր երաժշտութիւնն ու փորձում վերարտադրել դաշնամուրով:



Ճազմէնն առանձնակի ակնածանքով է խօսում աշխարհահռչակ գանատացի դաշնակահար Օսկար Փիթերսոնի մասին, ում ստեղծագործութիւններն ամենայնաճախ էին հնչում հաղորդման ժամանակ: Հենց նրան էլ Մալխասը համարում է իր միակ ուսուցիչը. «Նա ինձ համար Չայկովսկու անուն երաժշտական դպրոցն է, Ռոմանոս Մելիքեանի անուն երաժշտական ուսումնարանը, Կոմիտասի անուն կոնսերվատորիան եւ Մոսկվայի Գնեսինների անուն ռուսական երաժշտական ակադեմիան»:

Ի դէպ, Մալխասն ունի Օսկար Փիթերսոնի ձայնասկաւառակների ամենամեծ հաւաքածուն, որը գերազանցում է նաեւ Փիթերսոն ընտանիքի ունեցածին: Նա հաւաքել ու մէկտեղել է իր երաժշտական ուսուցչի նաեւ այն սկաւառակները, որոնցում վերջինս նուագակցում է այլ երաժիշտների: Իմանալով այդ մասին՝ Օսկար Փիթերսոնի կինը Մալխասին է նուիրել ամուսնու փողկապը, որն այսօր իր պատուաւոր տեղն ունի

«Մալխաս ճազ ակումբ»ում:

Մալխասը 17 տարեկանից նուագել է տարբեր խմբերում, իսկ 1962 թուականին ընդունուել Վալերի Բրիւսովի անուն օտար լեզուների ինստիտուտ՝ ռուսաց լեզու եւ գրականութիւն մասնագիտութեամբ: 1963 թուականին թմբուկահար Արմէն Թուրունջեանի՝ Զիկոյի եւ կոնտրաբասահար Արթուր Աբրահամեանի հետ բուհում ստեղծում է ճազային եռեակ, որ իր անունով կոչում է «Լեւոն Մալխասեանի անուն եռեակ»: Եռեակը համերգներ էր ունենում Կոմպոզիտորների միութեան, ֆիլհարմոնիայի դահլիճում եւ այլ համերգասրահներում: Մի քանի տարի անց եռեակին է միանում սաքսոֆոնահար Ալեքսանդր Չաքարեանը՝ այն վերածելով քառեակի: Ճազմէնը շատ լաւ է յիշում՝ 60 տարիների ընթացքում դահլիճները երբեք կիսադատարկ չեն եղել:

Ճազմէնն ընդդիմանում է, երբ շատերն իրեն համարում են Հայաստանում ճազի հիմնադիրը: Նա ներկայացնում է բոլոր այն երաժիշտներին ու ստեղծագործողներին, որոնք մինչ իրենց եռեակի հիմնումն արդէն լեւի-լեցուն դահլիճներում ճազային ստեղծագործութիւններ էին ներկայացնում մեծ բեմերով՝ Արտեմի Այվազեան, Կոնստանտին Օրբելեան, Մելիք Մալխասկալեան, Մարտին Վարդազարեան, Ստեփան Շաքարեան. «Ես պարզապէս նրանց ստեղծած աւանդոյթների պահպանողն ու շարունակողն էի:



Կարծում եմ՝ յաջողել եմ. Երեւանն այսօր ճազային քաղաք է»,- յաւելում է Մալխասը: Անուանի երաժիշտն ունեցել է ընդամենը մէկ ձեռքի մատների վրայ հաշուելի երազանք. դասաւորել է հերթականութեամբ եւ իրագործել կեանքի 77 եւ ստեղծագործական 60 տարիների ընթացքում: «Իմ առաջին երազանքն էր



մեկնել ԱՄՆ եւ ակումբում լսել այն մարդկանց, որոնց շնորհիւ ես սկսել էի նուագել: Այդ երազանքն իրականացրեցի 1990 թուականին՝ մի քանի անգամ»,- մեզ հետ զրոյցում նշում է Մալխասն ու թուարկում այն երաժիշտների անունները, որոնց ոչ միայն լսելու, այլեւ նուագակցելու բարեբախտութիւն է ունեցել՝ Զիկ Կորեա, Հերբի Հենքոք եւ այլք: Առաջին երազանքը իրագործում է տարիներ շարունակ, երբ համերգներով շրջագայում է. եղել է աշխարհի շուրջ 50 երկրում, սակայն կարճ ժամանակով՝ ընդամենը 13 օր. 14-րդ օրն անպայման ինքն ու Երեւանը պիտի հանդիպէն. «Ես երեւանեան հիւանդութիւն ունեմ, բարեբախտաբար՝ ոչ բժշկական ախտորոշմամբ»,-նշում է Մալխասն ու շտապում ներկայացնել յաջորդ երազանքը:

«Ճազային մեզաաստղերի մասնակցութեամբ Երեւանում միջազգային փառատոն կազմակերպելը իմ միւս երազանքն էր, որն ինձ նոյնպէս յաջողուեց՝ տասն անգամ»,- նշում է Մալխասն ու կրկին թուարկում այն ճազմէնների ու ճազային խմբերի անունները, որոնք այցելել են Հայաստան եւ մասնակցել ճազփառատոնին՝ Զիկ Կորեան, Ջո Զոքերը, Ռեյ Չարլզը, Ալ Զերօն, Ջորջ Բենսոնը, Թոմա Կոտաշվիլին, Ալ Դէ Միոլան, Տանիա Մարիան, «Wind and Fire», «New York Voices» խմբեր եւ այլն:

Լեւոն Մալխասեանի կարծիքով՝ դա ոգեւորիչ էր նաեւ մերօրեայ ճազմէնների համար, որոնք նուագակցում էին յայտնիներին, ապա հիւրընկալում նրանց երկրներում՝

համերգներով, մասնակցում ճազփառատոնների:

«Սեփական ճազ ակումբ ունենալը իմ երրորդ երազանքն էր, որ յաջողուեց 16 տարի առաջ: Այդ օրից սկսած՝ ամէն օր ես նուագում եմ այդ օրը նուագող խմբից յետոյ. չնուագել չեմ կարող, քանի որ հանդիսատեսը նաեւ Մալխասին է սպասում»,- նշում է ճազի վարպետն ու ուրախութեամբ ընդգծում, որ Երեւանում ճազ ակումբներ էլի կան, որտեղ նոյնպէս հնչում է մաքրամաքուր երաժշտութիւն:

Հիմնադրման օրից՝ ակումբում շուրջ 800 խումբ է փոխուել: Հենց այդ ակումբից են «թելեր առել» բազում երաժիշտներ, որոնք սովորել են ինչպէս միմեանցից, այնպէս էլ ճազի երեւանեան խորհրդանիշ համարուող Մալխասից. «Ես մշտապէս բոլորի համար ճանապարհ եմ բացում: Ճազում այդպէս էլ պետք է լինի»:

Նա այն կարծիքին է, որ ամէն մէկն իր գործով պիտի զբաղուի՝ իր երկրին պիտանի լինելու համար:

Ակումբն այսօր էլ աշխատում է մեծ ծանրաբեռնութեամբ. ամէն օր մի խումբ նուագում է ժամը 21.00-24.00-ը, ապա Մալխաս եռեակը՝ Լեւոն Մալխասեան, Արամօ (թմբուկ) եւ Նիկողայոս Վարդանեան (կոնտրաբաս)՝ յաճախ փոփոխուող ծրագրով:

«Ճազը կեանք է՝ փոփոխուող, չկրկնուող, բարդ երաժշտութիւն: Լսողը պիտի սիրի այն, որ հասկանայ: Այն հիմնուած է իմպրովիզացիայի վրայ եւ երաժշտի այդ պահի հոգեվիճակն է:

Եղեռնի Յետքերով - 24

Տեօրթեուլցի Պենոն Վասիլեանի Յուշերը Չոր Մերճուման-Չորք Մարգապան

Շար. նախորդ թիւէն

Առաւօտ ժամը ութին արթնցայ սուրճ մը խմեցինք, չիքթօֆթէի պատրաստութիւն կ'ըլլար: Ժամը ինուկէսին Կարապետը եւ Իգնատիոսը ձեռքերնին մէկական պայուսակ շալկած եկան: Վեց շիշ Պորտո եւ երկու շիշ օդի սեղան դրին: Չիքթօֆթէն շաղելու սկսան, ազատքեղը, սոխը, սեւ պիպերը, քաշուած միսը՝ ճիշտ Տեօրթ Եոյի ձեւով: Նստանք օդին բաժակները լեցուցին, Զամբարձումը ապաշխարած էր՝ օդի չէր խմեր, Պորտո գինին լեցուց: Առաջին կենացը խմեցինք, ինծի անցած ըլլայ ըսին: Լաւ կերանք-խմեցինք, ժամը տասներկու եղաւ, հիւրերը գացին Զամբարձումը ինծի ըսաւ՝

- Պենոն, դուն ալ պառկիր, երկու ժամ ետքը կ'երթանք, մեր դրացի Սապրին քեզ Աստոնին քով կը տանի:

- Ես չեմ պառկիր,- ըսի:

- Պենոն, այստեղ մարդիկ երկու ժամ հանգիստ կ'ընեն, կը պառկին, օրէնքը այսպէս է այստեղ,- ըսաւ Զամբարձումը:

- Ուրեմն պառկինք,- ըսի: Պառկեցանք, երկու ժամ ետք ելանք սուրճ խմեցինք, գացինք Սապրինին քով: Սապրին ճահիլ տղայ մըն էր, ամուրի, արհեստով դերձակ, հինգ ընտանիքներով բնակուած բակով տուն մը կ'ապրէր, ուր պէյրուլքի ընտանիք մըն ալ կար:

Թուրքիացի գնչուներ, ճիւղականներ

Մէկ ալ գնչու ձայնապնակի երգի ձայն առի, Սապրինին հարցուցի՝ հոս գնչուներ ալ կ'ապրին:

- Այո,- ըսաւ,- Թուրքիայէն եկած գնչու ընտանիք մը կայ, երկու տղայ մէկ աղջիկ ունի: Ասոնք ամէն օր գիշեր-ցերեկ այս գնչու երաժշտութիւնը կը լսեն քէֆ կ'ընեն, գործ չեն ըներ, մեծ գողեր են, ամէն ամիս յիսուն-վաթսուն հազար ֆրանքով կը խաղան: Ոչ ոք գիտէ ինչ կ'ընեն:

- Գնչու մարդը քանի՞ տարեկան կ'ըլլայ,- հարցուցի:

- Վաթսուն տարեկան կ'ըլլայ:

- Կրնա՞մ գինք տեսնել:

- Զիմա տանիմ քեզի, տէ՛ս,- ըսաւ: Ելանք գացինք, դուռը դակեց՝

- Զրամեցէք Ներս մտեք,- ըսին: Ներս մտանք, Սապրին ըսաւ՝

- Ձեզի թուրքիացի հիւր բերի, ձեզ տեսնել կ'ուզէ:

- Բարի եկեր էք, հազար բարի, հրամեցէք, նստեք,- ըսաւ ծերուկը:

- Դուք զրուցեցէք, ես քիչ մը գործ ունիմ երթամ գործս տեսնեմ,- ըսաւ Սապրին:

Գնչու ծերուկը ինծի հարցուց՝ Թուրքիոյ ո՞ր կողմէն եմ:

- Տեօրթեուլցի հայ եմ,- ըսի,- Տեյիրմէն Տերեսի կոչուող գիւղէն:

- Տեօրթեուլցի կօշկակար եւ ջաղացականութիւն ըսող Լեւոն մը կար կը ճանչնա՞ս,- հարցուց:

- Լեւոնը իմ հայրս է, ես այնտեղ ծնած եմ,- ըսի: Մարդը ոտքի ելաւ, զիս գրկեց՝

- Լեւոնին տղան, Արտեմն ես,- ըսելով համբուրեց զիս:

- Արտեմը իմ մեծ եղբայրս է, ես Պենոնն եմ:- Ամփոփապէս տղաները կանչեց, ըսաւ,- սեղան պատրաստեցէք, իմ բարեկամիս տղան եկեր է:- Շուտով սեղան դրին՝ ինչ որ կ'ուզես կար սեղանին վրայ՝ ուտելիք, խմելիք՝ տեսակաւոր: Տղաներէն մէկը դրկեց որ Սապրին կանչէ: Սապրին եկաւ: Թուրքիացի ըսաւ՝

- Դուն ինծի այնպիսի մէկը բերիր, զիս շատ ուրախացուցիր, նստիր խմենք: Մինչեւ ժամը վեց կերանք-խմեցինք, քէֆ ըրինք: Ըսի՝

- Պէտք է երթանք, Սապրին զիս Աստոնին քով պիտի տանի լիբանանեան անցագիր պէտք է հանէ:

- Այսօր Կիրակի է, վաղը կ'երթաք,- ըսաւ ծերուկը,- այսօր իմ հիւրն ես դուն,- զիս չձգեց,- Սապրին ալ՝ «կ'ըլլայ» ըսաւ: Ժամը տասը եղաւ՝

- Տղաքը զիս հիւրանոց թող տանին,- ըսի,- վաղը առաւօտ ետ կու գամ գործերնիս կը տեսնենք:

- Ի՞նչու հիւրանոց պիտի երթաս, հոս քեզի համար անկողին չունի՞նք,- ըսաւ ծերուկը, դարձեալ չձգեց: Զոն մնացի: Տունը վեց սենեակնոց մեծ բաժին մըն էր, ծերուկը գներ էր երեքհարկու ֆրանքի: Ինծի սենեակ մը տուին պառկեցայ: Պառկեցայ բայց ես ինծի օդին մէջ կը պառկիմ կարծեցի: Այդ չոր գետինը պառկող գնչուները թռչունի փետուրներով անկողինի վրայ

կը պառկին:

Առաւօտ ժամը ութին արթնցանք սուրճ խմեցինք, նախաճաշ ըրինք ժամը տասը եղաւ: Ծերուկը տղաքը կանչեց, ըսաւ՝

- Պենոնը տարեք վաճառատուն, իմ կողմէս քոսթիւմ մը նուէր առէք իրեն:- Տղոց մէկուն հինգ-վեց հազարանոց տուաւ, միւսին՝ միքանի հարիւրնոց: Զազարնոցներուն մէջ մէկ-մէկ շարեց հարիւրնոցները, ամէնքը մէկ եղան, մէկ ծայրը փոքր գնդասեղ մը մտցուցին, ինծի ալ հարցուց՝ տեսա՞ր ինչ ըրինք:

- Այո, տեսայ, ի՞նչ պիտի ըլլայ,- ըսի:

- Վաճառատուն կ'երթաք կը տեսնես ինչ պիտի ըլլայ,- ըսաւ:

Թաքսի մը նստանք մեծ վաճառատան մը առջեւ կեցանք Ներս մտանք: Վաճառատան մէկ ծայրէն միւսը հարիւրյիսուն մէթը կար: Ինծի համար ամառային ճերմակ քոսթիւմ մը առին եօթանասունհինգ ֆրանքի:

Տղան հազարանոց մը հանեց եղբօրը տուաւ, ան ալ շապիկ մը առաւ երեսուն ֆրանքի, մեզմէ առաջ գնաց դէպի դրամարկղը որ վճարէ, մենք ալ ետեւէն կ'երթայինք: Առաջին գացողը հազարնոցը տուաւ շապիկին երեսուն ֆրանքին համար, հազարնոցին վերադարձուածը առաւ գնաց: Ամփոփապէս իր ետեւէն մենք մօտեցանք: Տղան հանեց հարիւրնոց մը տուաւ հազարնոցին շարքին մէջէն՝ քոսթիւմին գինը:

Շար. յաջորդ թիւով

Մարգապան

ՀԲԸՄ-ՅԵԸ Անդրանիկ Սին Էլ Ֆիլ Հասաւ Լիբանանի 18-Էն Վար Տարիքային Ախոյեանութեան Աւարտականին

Շարունակելով Լիբանանի պասքէթբոլի 18 տարեկանէն վար ախոյեանութեան մրցումներուն փայլուն յաղթանակներու արշաւը, ՀԲԸՄ-ՅԵԸ Անդրանիկ Սին Էլ Ֆիլի աղջիկները, կիսաւարտական փուլի մրցումներուն՝ 47-39 արդիւնքով պարտութեան մատնեցին Չեմփսը եւ հասան աւարտականին:

Մրցումը տեղի ունեցաւ Շաբաթ, 6 փետրուար 2022, կէսօրէ ետք ժամը՝ 5.30-ին, Քահրապա Չուք մարզադաշտին մէջ:

Չեմփս կը նկատուի Լիբանանի տարիքային «ակադեմի»ներու լաւագոյն կազմերէն: Անոր պատասխանատուն է հանրածանօթ մարզիկ Ֆետի Խաթիպը:

Նշենք, թէ քառորդ աւարտականին մեր աղջիկները պարտութեան մատնած էին Ռիատին: Աւարտականին, ՅԵԸ Անդրանիկ Սին Էլ Ֆիլի մրցակիցը պիտի ըլլայ Զուփսը:

Աղջկանց կազմին մարզիչն է Ժիլպեր Սալիպա, վարչական պատասխանատուն՝ Նայիրի Սուէյտի - Զայրապետեանը, խմբապետուհին՝ Էրիքա Խուրին:

Յաջողութիւն կը մաղթենք ՀԵԸ



Անդրանիկ Սին Էլ Ֆիլի աղջկանց կազմին:

ՀԲԸՄ-ՅԵԸ-Ի ՄԱՍՆՈՅ ԵՒ ՏԵՂԵԿԱՏՈՒԿԱԸՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ՌԱԿ-ի Համադրուած Մամուլ

Ի՞նչ Սխալներ Գործեցինք Որ Հոս Հասանք

ԶԱԲԵՆ Գ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

Շար. նախորդ թիւէն

ԻՍԿ ԵՐԿՐՈՐԴ սխալը որ գործեց Դրոն, երբ 28 Յուլիս 1961ին Սուրիական կառավարութեան պաշտօնական մարմինները կը յայտարարեն որ, Սուրիոյ մէջ յայտնաբերուած են՝ լրտեսական ցանց մը, որուն պատասխանատուն է՝ Լիբանանի խորհրդարանի անդամ Մովսէս Տէր Գալուստեանը: Որպէս աղբիւր օգտագործած ենք, Զարթօնք օրաթերթ 4 Յունուար 1963 – Ա. Թադէոսեանի գիրքը՝ որ կը կոչուի «Դամասկոսեան Դատաւարութեան հետքերով», որուն տուեալները թարգմանուած են արաբերէն լեզուէն, ըստ սուրիական դատարաններու որոշումներու վրայ որուն պատճառաւ՝ ամբողջ Սուրիահայ գաղութը տառապանքի եւ հալածանքի մատնուեցաւ, Սուրիոյ հայերը շատ լաւ կը յիշեն այս տխուր դէպքերը: Այս գիրքէն անպայման թէ լիբանանի դաշնակցութիւնը պէտք է ունենայ:

Յօդուածին մէջ յիշուած բոլոր պատմական եղելութիւնները՝ այսինքն սխալները որ գործեցինք, հայ ժողովուրդէն խլեցին երկար տարիներ, որոնց ընթացքին պիտի կարենայինք՝ նուազագոյնը օգտագործել՝ խաղաղութեամբ կազմակերպելու համար՝ սփիւռքի գաղութները՝ որպէս մէկ ազգ՝ մէկ ժողովուրդ՝ մէկ եկեղեցի եւ կազմելով մէկ վտարանդի ազգային ժողով, որ կրնար ճանաչուի գտնել Միացեալ Ազգերու կողմէ, ինչպէս նաեւ որպէս մէկ պահանջատէր ժողովուրդ՝ հայոց ցեղասպանութեան եւ պահանջատիրութեան կենդանի վկայ՝ ճանչցուած միջազգային օրէնքներու համաձայն:

Բայց հազար ափսոս՝ այդ բոլոր սխալները, մեր ժողովուրդէն խլեցին այդ հսկայ ժամանակամիջոցը եւ չկրցանք հասկնալ ի՞նչ կը նշանակէ ազգ՝ ազգութիւն, ի՞նչ կը նշանակէ պետութիւն եւ ինչպէ՞ս կը կառուցուի եւ կը կազմակերպուի պետականութիւն եւ կը գործեն այս պետական կառոյցները:

Այլ ատելաւոր կիրքեր եւ որոշ սխալ ամրակում գաղափարներ մեկնելով՝ ամէն ինչ քանդեցինք եւ պատմական սխալներ գործեցինք, Նոյնիսկ անկախութեան առաջին մի քանի տարիներուն, եւ եթէ զանց առնենք խորհրդային շրջանի պետական կառոյցները, որոնք անկախութենէն ետք կողոպտուեցան, Նոյնիսկ ազգային դրոշմ կրող ժառանգութիւնները՝ ինչպէս տնտեսական՝ ճարտարարուեստական՝ արտադրական նշանակութիւն ունեցող կառոյցները, որոնք կողոպտուեցան ծախուեցան եւ կամ անտեսուեցան, ինչպէս Արարատ քոնիակի եւ գինիի վաճառաշահ գործարանը՝ որ 18 միլիոն տոլարի ծախուեցաւ՝ որպէսզի գրապանուի, եւ այսօր մի քանի հարիւր միլիոնի՝ ետ չենք կրնար գնել այդ գործարանը:

Անկախութենէն ետք՝ այս բոլորին մէջ ամենէն կործանարարը եղաւ, ուսումնական՝ կրթական՝ ակադեմական՝ համալսարանական՝ ազգային դաստիարակչական եւ մտաւորականութեան անտեսումը, լքուեցաւ գիտութիւնը՝ անխնամ մնացին ժառանգուած գիտական հետազոտական կառոյցները՝ կաճառները՝ ակադեմիկոսները՝ մտաւորականները եւ ամէն մասնագիտական ճիւղի արուեստագետները, եւ հիմնականը ազգի մը գոյութեան գլխաւոր ազդակը՝ հայերէն լեզուի պաշտամունքը:

Այս բոլոր ազգային գոյութեան հիմնական սիւները, այլակերպուեցան՝ այլափոխուեցան եւ մանաւանդ՝ հայ մարդը՝ հայ քաղաքացին՝ եղծուեցաւ այլասերեց եւ այլասերեց, կարծես հայրենի հողին վրայ օտարացաւ ժողովուրդը օտարամոլութենէ, ամէն ինչ խաթարուեցաւ՝ Նոյնիսկ փճացաւ: Անկախութենէն ետք հայոց աղքատ եւ փոքր այս Հայաստանը, կարծես կողոպտուի աւար դարձաւ, ամենափոքր պաշտօնեայէն մինչեւ նախագահը՝ երկիրը կողոպտեցին, եւ ծայր առաւ արտագաղթի՝ որ մինչեւ այսօր չէ դադարած: Երեւակայեցէք ի՞նչ կրնար պատահիլ եթէ երկիրը հարուստ ըլլար հանքերով՝ քարիւղով՝ ծանր եւ թեթեւ ճարտարարուեստով, հաւանաբար գիրար պիտի բզքտէին կողոպտելու՝ կամ գողնալու եւ կամ յափշտակելու համար:

Հայաստանի անկախութենէն ետք՝ դժբախտաբար քանդիչ ողբերգութիւն էր, որ հայրենի գիտականներու եւ մտաւորական ընտրանի խաւը, զոհ գնաց «ԱԶԱՏ ԿՈՉՈՒԿԸ ՇՈՒԿԱՅԻՆ», եւ բոլոր ազգային սրբութիւնները, հաւատքը՝ Հայոց Առաքելական Ուղղափառ Ս. եկեղեցին՝ անամօթաբար վիրաւորուեցան՝ անգոնացան անպատշաճօրէն: Այս բոլորին վերջնական կնիքը դրին եւ որոշմեցին, Ներկայ Հայաստանի կառավարութեան «ՍՈՐՈՍԱԿԱՆ» պաշտօնեաները, որոնք ամենայնոք արտաքին աշխարհի գործակալներ դուրս եկան, Նոյնիսկ հայոց ազգի ցեղային գոյութեան, բնաջնջման համար գործակցեցան եւ կը գործակցին Ներկայիս՝ օտար ծանօթ եւ անծանօթ արտաքին ոյժերու հետ:

Սորոսականներուն մասին անպայման կը թելադրենք յարգելի ընթերցողներուն որ կարդան եւ իմանան թէ, այս արտաքին ոյժերու Սորոսական գործակալներ, ի՞նչ աւերներ կը գործեն Հայաստանի մէջ: Այս առիթով մէկ տարուայ ընթացքին՝ իւրայատուկ չորս յօդուածներ լոյս տեսան «Պայքար շաբաթաթերթին» մէջ, երեք թիւներն՝ 132-133-134ը կը պատկանին

Վարդգէս Գուրուեանի գրիչին՝ որոնք անուններով՝ տեղեկագրական եւ բացատրական յօդուածներ են, եւ վերջերս 7 Դեկտեմբեր 2020ին «Պայքար»ի թիւ 207 թիւին մէջ լոյս տեսաւ երեւանցի հեղինակաւոր լրագրուի «Հերմիէ Զամանեանի» ուսումնասիրուած եւ առարկայական փաստերով եւ անուններով յօդուածը, ուր կը մերկացնէ ապ-ազգային քանդիչ գործունէութիւնը Սորոսականներուն: Կարելի է այս յօդուածները կարդալ «Պայքար» շաբաթաթերթի անունին տակ համացանցին վրայ: Պէտք է Ներկայ կառավարութիւնը՝ անմիջապէս որոշում գոյացնէ փակելու բոլոր Սորոսական գրասենեակները, Նոյնիսկ Սահմանադրական դատարանի օրէնքներով, որպէս արտաքին ոյժ՝ երկրին ազգային ապահովութիւնը վտանգի մատնող եւ դաւաճանող օտար գործակալներ, Նոյնիսկ Հայաստանի օրէնքներուն համաձայն պէտք է քրեական պատիժներ սահմանուին բոլորին համար:

Ո՛ր եւ այդ գրիչները՝ որոնք տեսնելով հանդերձ՝ ծախուած գործակալներու աւերիչ գործունէութիւնը կը լռեն:

Ո՛ր եւ մշակոյթի ծառայողները, ինչո՞ւ գրիչ չեն վերցնէր որպէսզի դատաւարտեն Սորոսական գործակալները, որոնք կը պայքարին հայոց լեզուին՝ ազգային ինքնութեան՝ Նոյնիսկ հայոց պետականութեան դէմ, բոլոր հայրենի մտաւորականութեան, պարտականութիւնն է պայքարիլ Սորոսական հաստատութիւններուն դէմ: Անոնք ոճիւր կը գործեն հայերէն լեզուին՝ հայ մշակոյթին՝ հայոց պատմութեան՝ հայոց պետականութեան դէմ:

Հայ ժողովուրդը Սրբազան պատերազմ կը մղէ՝ որպէսզի փրկէ իր ազգային՝ ցեղային գոյութիւնը՝ ընդդէմ ամենէն ահաւոր եւ ճակատագրական թշնամիներուն, եւ որոշ անձեր իրենց մարդկային եւ ազգային խիղճը ծախած ափ մը արծաթի համար՝ կը դաւաճանեն իրենց ազգը՝ հաւատքը եւ ինքնութիւնը:

Ուրեմն յարգելի ընթերցողը՝ ինչպէս որ կը նշմարէ՝ անգամ մը եւս կը յիշատակեմ, աւելի քան հարիւր տարիներ է ի վեր գործուած սխալները, որոնց պատճառաւ զոհ գնաց համայն հայ ժողովուրդը, որովհետեւ ինչպէս որ յիշատակեցինք Յովհաննէս Զաքարիանի վկայեց ըսելով «Չենք կարողացել տարբերել պետութիւնը կուսակցութիւնից ու կուսակցական մտայնութիւն ենք մտցրել պետական կեանքի մէջ: Պետական մարդիկ չէինք մենք» Էջ 54:

Ինչպէս կը նշմարենք որոշ ղեկավարներ չկրցան ազգի մը գոյութիւնը՝ մեր ժողովուրդին գոյութիւնը գերադասել կուսակցամոլութենէ եւ իշխանամոլութենէ, եւ զոհեցին համայն հայ ժողովուրդը այդ հոգեկան՝ մտային՝ հիւանդագին եսապաշտական ախտին համար, եւ որոշ ձեւով բան մը որ կը շարունակուի մինչեւ այսօր:

Որովհետեւ այդ գործուած սխալներուն պատճառաւ, ամբողջ սփիւռքը անփառունակ՝ անհաշտ՝ պառակտուած՝ ոչ միասնական՝ քառասուն կտոր եղած է՝ եւ կը շարունակուի մինչեւ այսօր այդպէս մնալ: Այս առթիւ պէտք է միջամտեմ եւ Արշակ Զօպանեանէն նախադասութիւն մը մէջբերեմ ուր կ'ըսէ «ԱԶԳ ՍԸ ԶԻ ԿՈՐՍՈՒԻՐ, ԵՐԲ ԳԻՏԵ ԻՐ ՍԻԱԼՆԵՐԸ ԾԱՆՉՆԱԼ ԵՒ ԻՆՔՉԻՆՔ ՈՒՂՂԵԼ»: Իսկ եթէ մեր սխալները չի ճանչնանք եւ չի սրբագրենք, այս պարագային սփիւռքի մէջ պիտի լուծուինք՝ եւ պիտի չկարենանք աւելի երկար գոյատեւել, ինչպէս պատահած է հին ժամանակներուն հին հայ գաղութներուն:

Մեր նպատակը այդ սխալները յիշելով՝ վերջերս բորբոքել չէ եւ ոչ ալ ունէ կողմ վիրաւորել է, այլ վերջապէս՝ պէտք է անդադրաբար մեր անցեալի սխալներուն, որպէսզի լուծուինք որոնք ենք՝ եւ ճիշդը գործենք: Արշակ Զօպանեան եւ մանաւանդ այս դժուարին եւ ճգնաժամային օրերուն, ուր մեր ցեղային գոյութիւնը վտանգուած է, եւ այստեղ պէտք է վճռականօրէն շեշտենք որ՝ օտարներէն պէտք չէ օգնութիւն սպասենք: Եւ ի՞նչ իրաւունքով, որ երկիրը որ կ'ուզէ ըլլալ, որովհետեւ օտարներէն յոյս չկայ՝ անոնք իրենց շահերը պիտի պաշտպանեն, եւ մենք պէտք է մեր ոյժերուն՝ մեր կարողութիւններուն եւ մասնաւորապէս մեր «ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ» պէտք է վստահինք եւ այս բոլոր տարիներու ողբերգական սխալներէն դուրս գանք՝ վերածնինք՝ հզօրանանք՝ աւելի զօրաւոր՝ աւելի հուժկու՝ աւելի խելացի՝ եւ աւելի հզօր դառնանք:

Նշանաւոր գերմանացի իմաստասէր փիլիսոփայ «Friedrich Wilhelm Nietzsche»-ն 1889ը թուականներուն՝ իր հրատարակած «Goetzen-Daemmerung» - «Կուռքերու Մթնաշաղ»ի հաւաքածոյի մէջ, որ կը կրէ «Sprueche und Pfeile» - «Ասացուածքներ եւ Սլաքներ» վերնագիրը, այդ գլուխի ճրդ համարը որ կը կրէ վերնագիր մը «Aus der Krieger schule des Lebens» - «Կեանքի պատերազմի դպրոցէն» եւ ուր կ'ըսէ՝ իր ասացուածքը դարձած է իմաստասիրական՝ տրամաբանական վկայութիւն մը «Was mich nicht umbringt, macht mich Staerker» «Ինչ որ զիս չի սպաներ, զիս աւելի զօրաւոր կը դարձնէ»:

Այս խօսքը ըսած է՝ այն համոզումով որ անցեալի սխալները պէտք չէ գործենք:

Շար. յաջորդ թիւով



ՌԱԿ-ի Համադրուած Մամուլ

Կամք Ունենք, Ուզում ենք Ապաքինուել. Դաւիթ Բաբայեան...

Սկիզբը Էջ 02

Ազրպեյճանը անգամ վերջին պատերազմի ժամանակ զաւթելով այսքան տարածք, Էլի չեն հանգստանում: Այսինքն Նրանց զաւթողական քաղաքականութիւնը չի փոխուում: Այսպիսի բարդութիւններ կան», - հարցին պատասխանեց Դաւիթ Բաբայեանը:

Արցախում սահմանադրական փոփոխութիւնների իրականացման վերաբերեալ ինչպէս հարցի մասով Բաբայեանը նշեց՝ մեկնարկել է սահմանադրական փոփոխութիւնների գործընթացը: Ներկայ Սահմանադրութիւնը, ըստ նախարարի, ունի երկու վտանգաւոր կետ, որը անհրաժեշտ է փոփոխման ենթարկել:

«Տեսեք, մենք 2017 թուականին ընդունեցինք Արցախի երկրորդ սահմանադրութիւնը: Այս տեսակետից Արցախը իւրայատկութիւն ունի: Առաջին սահմանադրութիւնը մենք ընդունել ենք 2006 թուականին: Մինչ այդ մենք Սահմանադրութիւն չենք ունեցել: Այս Նոր Սահմանադրութիւնը վատը չէ, բայց կան որոշ կետեր, որոնք քննարկման ենթակայ են: Ես կ'անդադրաւոր երկու կետի: Դրանք բաւականին վտանգաւոր են: Առաջինը՝ Ազգային ժողովի ու նախագահի ինստիտուտները ինչ-որ կերպ այս Սահմանադրութեամբ միաձուլուել են: Ազգային ժողովի ու նախագահի ընտրութիւնները տեղի են ունենում նոյն օրը: Մի կողմ դնենք տեխնիկական հարցերը, խառնաշփոթը: Ընտրութիւններից յետոյ Ազգային ժողովը չի կարող, օրինակ, անվտանգութիւն յայտնել նախագահին, որովհետեւ դրանից յետոյ պետք է հրաժարական տա: Նախագահը չի կարող արձակել Ազգային ժողովը, հակառակ դէպքում ինքն էլ պետք է հրաժարական տա: Մենք այն ժամանակ հարցնում էինք, եթէ օրինակ մի քանի ամիս յետոյ նախագահը որոշում է հրաժարական տալ, կամ մահանում է, կամ այլ խնդիր է լինում, ի՞նչ պետք է լինի: Պետք է Նոր ընտրութիւններ լինեն՝ Ազգային ժողովի ու նախագահի: Այդքան ծախսեր, ներքաղաքական պայքար: Սա մէկը միւսին թուլացնում է, ոչ թէ հաւասարակշռում: Ես կարծում եմ՝ խորհրդարանը պետք է իրաւունք ունենայ անվտանգութիւն յայտնել նախագահին՝ առանց լուծարուելու եւ հակառակը», - ներկայացրեց արցախցի պաշտօնէան:

Երկրորդը կարելուր կետը, որը ներկայացրեց Բաբայեանը հետեւեալն է: Եւ այսպէս, 2006 թուականի Սահմանադրութեամբ, ընտրութիւնները կայացած էին համարում, եթէ դրան մասնակցում էր ընտրողների 20 տոկոսից ավելին: Ներկայ սահմանադրութեամբ կապ չունի քաղաքացիների քանի տոկոսն է քվերակել. «Եթէ օրինակ ամբողջ գիւղը չգնայ ընտրութեան, միայն այդ թեկնածուն ընտրի, նա համարում է ընտրուած: Այս երկու կետի վերաբերեալ մենք ունեցել ենք մեր սկզբունքային դիրքորոշումը: Պատկերացրեք, եթէ այդ երկու ինստիտուտներից մէկին բան պատահի, պետական համակարգը ամբողջութեամբ կարող է կաթուածահար լինել: Ինչու պետք է ազգային ժողովը այսքան

փոխկապակցուած լինի նախագահի ինստիտուտի հետ: Հիմա, բարեբախտաբար, փոփոխութիւններ են տեղի ունենում»:

Առջանց լսարանի մասնակիցներից Նիւ Եորքից Ներկայ մը Դաւիթ Բաբայեանից հետաքրքրուեց՝ 44-օրեայ պատերազմի ժամանակ, երբ խօսուում էր սքանտիւնաւեան խաղաղապահներ Արցախ ուղարկելու մասին, ինչու դէմ արտայայտուողներից մէկը հենց ինքը եղաւ. «Ինչու՞ դուք մեծ ջանքերով սկսեցիք պայքարել դրա դէմ ու կողմ խօսել ռուս խաղաղապահների տեղակայմանը», - հարցրեց մասնակիցը:

Արցախի արտգործնախարարը պատասխանեց՝ սքանտիւնաւեան երկրներից չի եղել պաշտօնական առաջարկ խաղաղապահներ ուղարկելու մասին: «Իսկ խաղաղապահների մասին կ'ասեմ, որ Ռուսաստանն ավելի մեծ ներուժ ունի խաղաղապահների, քան սքանտիւնաւեան երկրները: Ինչ էք կարծում, ռուսական խաղաղապահները ավելի վա՛տ կը կատարեն իրենց առաքելութիւնը, քան սքանտիւնաւեան խաղաղապահները: Մենք Ռուսաստանի ու ռուս ժողովրդի հետ եղբայրական ենք, բայց դա չի նշանակում, որ մենք թշնամական ենք Ամերիկայի հետ: Սակայն, փաստն այն է, որ Ռուսաստանն ու ռուս խաղաղապահներն ավելի հեշտ են կատարում իրենց առաքելութիւնը, ավելի մօտ են: Ես կ'ուզեի մէկ բան էլ ավելացնել ու այս հարցը փակել: Մենք ունենք շատ մեծ սխալ, որը Ձեզ մօտ եւս երեւում է: Մենք երբեք որեւէ մէկին չպետք է մեղադրենք մեզ հետ տեղի ունեցածի մէջ: Մեր պատմութեան մէջ ինչ բարդութիւն եղել է, մեղքը մերն է եղել: Դրա համար եմ ասում, որ մեր ապագան ինտելեկտի ու հայրենասիրութեան մէջ է», - ասաց պարոն Բաբայեանը: Հարթակը



Սեւակ Յակոբեան

վարող Սեւակ Յակոբեան այստեղ մեջբերեց կարելուր փաստ մը: Ան բոլորին յիշեցուց, որ ամէն տեսակի եւ ազդեցութեան ներքոյ եղող «հայաստաններէն»՝ վերջին հարկւրամեակներու թրքահայաստանէն, պարսկահայաստանէն եւ ռուսահայաստանէն, գոյատեւեց եւ մեզի հասաւ ռուսական ազդեցութիւնը, բարեկամութիւնն ու զօրակցութիւնը վայելող աշխարհագրական հատուածը, որ այսօր կայ ու կը ճանչցուի որպէս Հայկական պետականութիւն: «Այս անհերքելի փաստը մեզի շատ բաներ պետք է յուշէ ու սորվեցնէ». եզրափակեց Յակոբեան:

Շար. Էջ 08

ԲԱՆ ՈՒ ԳԻՐ

Օ՛, դու կարող ես ինձ դարձնել
Ամենից լաւը այս լուսնի տակ,
Եւ գեղեցիկը ամենքի մէջ,
Եւ բախտաւորը ամենքից շատ:
Քո ձեռքի փոքրիկ մի շարժումով
Կարող ես ինձ տալ աշխարհը մեծ,
Կարող ես բացել քո հայեացքով
Իմ դէմ՝ բարձրե՛րը արեւամերձ.
Ու դարձնել ինձ նորից, նորից
Պատանի՝ պատրաստ սաւառնելու,-
Հաւատացրու որ սիրո՛ւմ ես ինձ,
Հաւատացրո՛ւ լոկ, հաւատացրո՛ւ

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ



ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՐԱՅՈՅՑ

08 2022
ՓԵՏՐՈՒԱՐ

Կրկ Երկ Երեք Գրեք Հնգ Ուրբ Շաբ						
		1	2	3	4	5
6	7	8	9	10	11	12
13	14	15	16	17	18	19
20	21	22	23	24	25	26
27	28					



ԼԱՉԱՐ ԱԿՐԻՅԵԱՆ

(1911 – 2001)

«Դպրոցի կառուցումը Երեւանի մէջ»



ՈԱԿ-ի Համադրուած Մամուլ

Կամք Ունենք, Ուզում ենք Ապացիւնւել. Դաւիթ Բաբայեան...

Շար. էջ 07-Էն

Լսարանի մասնակիցներից Արթուր Մանուկեան արտաքին գերատեսչության ղեկավարից հետաքրքրուեց՝ ի՞նչ զարգացումներ կարող են տեղի ունենալ, եթե, օրինակ, Ազրայեյանում իշխանություն փոխվի: Բաբայեանի կարծիքով՝ դա որեւէ Եական բան չի փոխի: «Փոխուելու է միայն ներքին քաղաքականությունը, բայց արմատական որեւէ փոփոխություն դժուար տեղի ունենալ, քանի որ հայատեցությունը նրանց գլխավոր գաղափարախօսությունն է: Մենք լաւ ենք տիրապետում Ազրայեյանի ներքին կեանքին, չկայ գեթ մէկ ուժ, որը կասի սխալ էք վարում, ի՞նչ հայատեացություն է, ատելություն է հայերի նկատմամբ: Հետեւաբար դժուար թէ ինչ-որ բան փոխվի»:

ՈԱԿ-ի Յունաստանի պաշտոնաթերթ «Նոր Աշխարհ»-ի խմբագիր Չաւեն Գրիգորեանը հետաքրքրուեց՝ Արցախի բռնագրաւած տարածքները հնարաւոր է դիւանագիտական ճանապարհով վերադարձնել: «Դժբախտաբար ոչ: Ես չեմ հաւատում: Ուզում եմ անկեղծ լինել ձեզ հետ: Իրենց մօտ, ցաւալի է, բայց հողի տեսչը երբեմն աւելի բարձր է, քան մեզ մօտ: Նրանք կամաւոր մէկ միլիմետր անգամ չեն զիջի: Նրանք կարող են փորձել խաբել մեզ, բայց կամաւոր յանձնել գրաւած հողերը, չեմ կարծում», - ցաւով նշեց Դաւիթ Բաբայեանը: Այս համատեքստում Լիբանանի «Զարթօնք» օրաթերթի խմբագիր Սեւակ Յակոբեանը նկատեց՝ «դժբախտաբար, մենք այդ հողի արժէքը չիմացանք: Եթէ Արցախի բնակչությունը շատ աւելի մեծ լիներ, ամբողջ աշխարհը կը շարժէր: Բայց, ցաւօք, մենք հեռակայ հայրենասիրություն ունենք»:

Ներկաներից Ալպեր Զեյնեան հարցուց Արցախի պատմամշակութային կոթողների պահպանման մասին, որին ի պատասխան պարոն Բաբայեանը նշեց՝ դժբախտաբար մշակութային ցեղասպանություն է տեղի ունեցել, բոլոր պատմամշակութային կոթողները ոչնչացուել են:

«Միգրացե մէկ-երկու կողող մնացել են, այն էլ դժուարաւոր եմ ասել ինչ վիճակում են: Մենք դիմել են տարբեր կառոյցների, ՄԱԿ-ին, ԵՈՒՆԵՍԿՕ-ին, խնդրելով առաքելություն ուղարկել Արցախ, բայց Ազրայեյանը, կոպտօրէն խախտելով միջազգային օրէնքները, թոյլ չի տալիս: Սա արժեհամակարգի ճգնաժամ է: Այն կոթողները, որոնք նրանք չենք կարողանում ոչնչացնել, օրինակ Դադիվանքը, այն պատճառով է, որ դրանք գտնուում են համայն բնակչության պատրիարքի, նախագահի հովանու ներքոյ, իրենք խօսք են տուել, որ պահպանելու են», - ներկայացրեց բանախօսը:

Մասնակիցներից Դոկտ. Արշաւիր Կեօնճեան, Դոկտ. Հրաչ Գույումճեան, Արամ Արքուն, Տիրան Աւետեան, Արփի Թովմեան, Գեորգ Զեյնեան, Այտա Զարիպեան, Սագո Արեան եւ այլ ներկաներ կարեւոր հարցեր ուղղեցին օրուայ գեկուցաբերին: Պրն. Բաբայեան համապարփակ կերպով պատասխանեց բոլորին: Պրն. Բաբայեան յատուկ կերպով ողջունեց մասնակիցներէն ամերիկաբնակ բարերար Վարդան Նազիրեանին, օրինակելի նկատելով իր ըրած գործնական ներդրումները Արցախի մէջ:

Արժանքի ՈԱԿ-ի պաշտոնաթերթ «Սարտարապատ»-ի տնօրէն Սերխիօ Նահապետեանն իր խօսքում, անդրադարձ կատարեց վերջին 30 տարում Հայաստանում ու Արցախում կատարուած աշխատանքների, թերացումներին, Սփիւռքի դերակատարմանն ու այն բոլոր պատճառներին, որոնք հանգեցրին այսօրուայ իրավիճակին: Արցախի արտգործնախարարի խօսքով՝ մեր թերացումների պատճառը պետականամետ մտածողութեան ոչ բաւարար մակարդակն է: «Ամենահին ազգերից ենք, 10- 15 հազար տարուայ պատմություն ունենք, բայց ժողովրդի մէջ պետական մտածելակերպի բացակայություն կայ: Ես տարիներ շարունակ ուսումնասիրում եմ ու չեմ կարողանում ֆիքսել, թէ երբ է մեզ մօտ սկսուել այդ գործընթացները: Պէտք է մատաղ սերունդը դաստիարակել պետականամետ մտածողութեամբ: Շատ անելիքներ կան: Աստուած մեզ միշտ մի շանս տալիս է ու մենք պարտաւոր ենք դուրս գալ այս իրավիճակից», - իր խօսքը եզրափակեց Արցախի արտգործնախարար Դաւիթ Բաբայեանը:

«Զարթօնք» օրաթերթի գլխավոր խմբագիր Սեւակ Յակոբեանը աւարտին կոչ ուղղեց ներկաներուն յառաջիկայ օրերուն ու ամիսներուն անպայման այցելել Արցախ, իրենց գործնական հայրենասիրութիւնն ու զօրակցութիւնը ցուցաբերելու Հայ ժողովրդի խիղճն ու պատիւը հանդիսացող Արցախին: Ան շնորհակալութիւն յայտնեց Դաւիթ Բաբայեանին ժամանակ տրամադրելու եւ հետաքրքիր զրոյցի համար:



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ



ثانوية مسروبيان للأرمن الكاثوليك
COLLEGE MESROBIAN DES ARM. CATH.
ՀԱՅ ԿԱԹ. ՄԵՍՐՈՊԵԱՆ ԲԱՐՁՐ. ՎԱՐԺԱՐԱՆ



2. Մուքահալ Հիմնարկը Կը Շարունակէ Աջակցիլ Մեսրոպեան Վարժարանին Կրթանպաստ Յատկացնելով 250 Աշակերտներու

«2. Մուքահալ հիմնարկ»-ի եւ Հայ կաթողիկէ Մեսրոպեան բարձրագոյն վարժարանին մէջ 2016-էն ի վեր գործող «RAFIQ» կրթական աջակցութեան ծրագրի հիմնադիր պարոն Ուիսամ Մուքահալ վերահաստատեց իր յանձնառութիւնը Մեսրոպեան վարժարանին հանդէպ եւ յայտարարեց, որ պիտի շարունակէ աջակցիլ վարժարանին՝ ընթացիկ տարեշրջանին համար կրթանպաստ տրամադրելով միջնակարգ եւ երկրորդական բաժիններու 250 աշակերտներու:

Պարոն Մուքահալ յայտնեց, որ աջակցութեան շարունակութիւնը կ'արտայայտէ իր խոր գնահատանքը՝ հանդէպ Մեսրոպեանին եւ անոր կրթական ծառայութիւններուն:

Մեսրոպեան վարժարանի տնօրէնութիւնը իր աշակերտներուն հետ միասին

խորին շնորհակալութիւն կը յայտնէ յարգարժան բարերարին, այնքան անհրաժեշտ այս օգնութեան համար: Տնօրէնութիւնը կը հաստատէ, որ այս աջակցութիւնը պիտի օգնէ Մեսրոպեանին հետամուտ մնալու իր կրթական առաքելութեան ներկայ դժուարին ժամանակներուն եւ շարունակելու առաջարկել լաւագոյն ծառայութիւնները կրթութեան մէջ:

Տնօրէնութիւն

Հայ կաթողիկէ Մեսրոպեան բարձրագոյն վարժարանի
8 Փետրուար, 2022

ԹՄՄ-ի Լուրեր

Մալխասի Կատարուած ու Անկատար Երազանքները...

Սկիզբը էջ 04

Ես նուազում եմ տրադիցիոն եւ հասկանալի ճագ, կարողանում եմ ունկնդրի տրամադրութիւնից հասկանալ՝ ընկալել՝ Ե երաժշտութիւնը, թէ՛ ոչ», - ասում է Մալխասն ու վստահեցնում՝ ճագ սովորել հնարաւոր է, եթէ ծնուել ես իմպրովիզացիա անելու կարողութեամբ: Բացի ճագից՝ Մալխասը լսում է յայտնի դասական դաշնակահարներին՝ Վլադիմիր Գորոլից, Գլեն Գուլդ եւ այլոց:

Կատարուած երազանքների կողքին Մալխասն ունի առայժմ մի անկատար երազանք՝ հիմնել ճագային ստուդիա-դպրոց, որտեղ ճագմէները կը ձայնագրուեն, կ'ունենան ձայնասկաւառակ: Ոչ մի րոպէ չի դադարում հաւատալ Նաեւ այդ երազանքի իրագործմանը, սակայն համալարակն ու 44-օրեայ պատերազմը փոխեցին Նաեւ այդ ծրագիրը: Դրանք խոչընդոտում են Նաեւ Լեւոն Մալխասեանի



ստեղծագործական կեանքի ռիթմին. շուրջ մէկուկէս տարի հայրենիքից դուրս Նա ոչ մի համերգ չի ունեցել: «Արդէն 18 երկրից հրաւեր ունեմ՝ Մոսկուայից մինչեւ Աւստրիա: Գրի եմ առնում, բայց չգիտեմ՝ կը գնամ, թէ՛ ոչ», - նշում է Մալխասը, որն իր ամենակարեւոր ու մեծ կոչումը համարում է «Երեւանի պատուաւոր քաղաքացի»-ն. Երեւանը, որին Նա հարստացրել է մալխասեանական իր գոյնով, սիրում է իր երեխայի պէս՝ անտեսելով թերութիւնները: Սիրում է՝ ուղղակի:

Հայաստանի «Թէքէան»
Մշակութային Միութեան
լրատուական կենտրոն
ՔՐԻՍՏԻՆԵ ՄԵԼՔՈՆԵԱՆ